**Հարց** Ե՞րբ է օպերատորը կամ ծառայություններ մատուցողն իրավասու բացահայտել հաճախորդների տեղեկությունների գաղտնիությունը:

**Պատասխան** Օպերատորը կամ ծառայություններ մատուցողը իրավասու է բացահայտել հաճախորդների տեղեկությունների գաղտնիությունը.

1) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ քրեական հանցագործության կամ ազգային անվտանգության նկատմամբ որևէ սպառնալիքի հետախուզման, հետաքննման կամ քրեական հետապնդման առնչությամբ.,

2) հաճախորդի գրավոր համաձայնության հիման վրա,

3) եթե բացահայտումն անհրաժեշտ է ի պաշտպանություն օպերատորի կամ ծառայություններ մատուցողի (ընթանում են վարույթներ ընդդեմ այդ օպերատորի կամ ծառայություններ մատուցողի):

Հաճախորդը կարող է պահանջել, որպեսզի բացահայտումը կատարվի գաղտնիության կարգով՝ դռնփակ վարույթների միջոցով: